**Հասցեատեր՝**
«Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcararatarmenia.am

**«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության**

**Կարգապահական և էթիկայի կոմիտեի**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**12.12.2024թ.**

| | |
|---|---|
| Նախագահ | Կարեն Հովհաննիսյան |
| Անդամներ | Հենրիկ Խաչատրյան |
| | Նարեկ Ադամյան |
| | Դավիթ Բակլաչյան |
| | Արփի Լազարյան |

---

| | |
|---|---|
| **Վարույթ՝** | ՊԼ-048 |
| **Խախտում՝** | 1. «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Խոսե Ժունիոր Խուլիո Բուենոյի (37830) կողմից ոչ սպորտային պահվածք դրսևորելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ)<br>2. Խաղի ժամանակահատվածում «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից հրավառ նյութեր կիրառելը (Հավելված 1 Ա, 25-րդ կետ) |
| **Առաջնություն՝** | Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգա |
| **Խաղ՝** | «Նոա» - «Արարատ-Արմենիա», 04.12.2024թ. |

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Խոսե Ժունիոր Խուլիո Բուենոյի (37830) նկատմամբ կիրառել «Նկատողություն»:
   *«Նկատողություն» ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ համանման կարգապահական խախտում թույլ տալու դեպքում կիրառվում է ավելի խիստ պատասխանատվության միջոց:*

   Հեռացման արդյունքում որակազրկված ֆուտբոլիստը՝ «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Խոսե Ժունիոր Խուլիո Բուենոյի (37830), բաց է թողնում 1 (մեկ) խաղ: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի դեկտեմբերի 4-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):

2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրտասնապատիկի՝ 210,000 ՀՀ դրամի չափով:

**ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝**

**Կարեն Հովհաննիսյան**

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: